ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից
ապացույցներ պահանջելու և
դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին

ԵԴ2/4848/02/24 ք. Երևան
2 Հուլիսի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով Ռուբիկ Հարությունյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Ռուբիկ Հարությունյան Ա/Ձ-ի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի՝ թիվ ԿՄԲՀ-ԳՀԾՁԲ-24/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.06.2024թ. որոշումը՝ Ռուբիկ Հարությունյան Ա/Ձ-ին պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու մասով անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանին Ռուբիկ Հարությունյան Ա/Ձ-ի հետ 1155000 ՀՀ դրամ պայմանագրային գնով պայմանագիր կնքել պարտավորեցնելու պահանջների մասին:

Հայցվորը վճարել է 40.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար և միաժամանակ միջնորդություն է ներկայացրել պետական տուրքի չվճարված մասի վճարումը հետաձգելու և դատական ակտով այն լուծելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական տուրքի վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու, պետական տուրքը և դրա դրույքաչափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9.1) կետով սահմանված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով գնումների հետ կապված վեճերի վարույթով նախատեսված վեճերով, բացառությամբ սույն մասի 9.2-9.5-րդ կետերով նախատեսված դեպքերի Դատարան տրվող հայցադիմումների համար դրույքաչափերը, համաձայն որի՝ պետական տուրքը գանձվում է գնման գնի մեկ տոկոսի չափով, բայց ոչ ավելի բազային 10000-ապատիկից:

Նույն մասի 9.2) կետի համաձայն՝ «Գնումների » Հայաստանի Հանրապետության ի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով՝ պետական տուրք գանձվում է բազային 100-ապատիկի չափով:

Դատարանը ուսումնասիրելով հայցվորի կողմից ներկայացված փաստաթղթերը, գտնում է, որ միջնորդությունը՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին, ենթակա է բավարարման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով,

համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքից պետք է պահանջել ԿՄԲՀ-ԳՀԾՁԲ-24/18 ծածկագրով մրցույթի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Ռուբիկ Հարությունյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի՝ թիվ ԿՄԲՀ-ԳՀԾՁԲ-24/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.06.2024թ. որոշումը՝ Ռուբիկ Հարությունյան Ա/Ձ-ին պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու մասով անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանին Ռուբիկ Հարությունյան Ա/Ձ-ի հետ 1155000 ՀՀ դրամ պայմանագրային գնով պայմանագիր կնքել պարտավորեցնելու պահանջների ի մասին, ընդունել վարույթ:

2. ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքից պահանջել դատարան ներկայացնել ԿՄԲՀ-ԳՀԾՁԲ-24/18 ծածկագրով մրցույթի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թվականի հուլիսի 26-ին:

5.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան

Digitally signed by AVETISYAN NAIRA 7501660379
Date: 2024.07.02 11:02:11 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am